

**ԵՐԿՐԱԶԵՐՄՈՒԹՅՈՒՆ**, գ Ե ո թ Ե ր մ ի-  
 կ ա, գ Ե ո թ Ե ր մ ի ա ( $< h ու ն$ .  $\gamma \eta$  —  
 երկիր,  $\theta \epsilon \rho \mu \acute{o} \varsigma$  — տաք, ջերմ), երկրա-  
 ֆիզիկայի բաժին. ուսումնասիրում է  
 Երկրի ընդերքի ջերմային վիճակն ու  
 ջերմային պատմությունը: Հետազոտու-  
 թյունները տարվում են արտավիժած լա-  
 վաների, ջերմուկների, հորատանցքերում,  
 հանքահորերում ու ծովի հատակում  
 ապարների ջերմության անմիջական չա-  
 փումների միջոցով, ինչպես նաև ընդեր-  
 քում նյութի էլեկտրահաղորդականու-  
 թյան, ապարների ջերմաֆիզիկական  
 հատկությունների որոշմամբ: Երկրի ջեր-  
 մային դաշտը պայմանավորված է ընդեր-  
 քում արտազատվող և Արեգակից ստաց-  
 վող էներգիայով: Երկրի մակերես հաս-  
 նող արեգակնային էներգիան ( $10^{23}$   
*էրգ/տարի*) լրիվ մարում է 10—20 *մ* խո-  
 րություններում (հ ա ս տ ա տ ու ն ջ Ե ր-  
 մ ա ս տ ի ճ ա ն ի գ ո տ ի), ուր ջերմաս-  
 տիճանի օրական տատանումներ չեն հայտ-  
 նաբերված, իսկ տարեկաններն աննշան  
 են: Հաստատուն ջերմաստիճանի գո-  
 տուց դեպի խորք դիտվում է ջերմաստի-  
 ճանի անընդհատ մեծացում: Հաշվված  
 է, որ Երկրի ընդերքից ջերմության ար-  
 տահոսքը կազմում է  $10^{28}$  *էրգ/տարի*,  
 որը 30 անգամ ավելի է 1970-ին աշխարհում

գործող բուր էլեկտրականների գու-  
մարային հզորությունից: Ջերմության ար-  
տահոսքի միջին արժեքը ամբողջ երկրի  
համար  $1,2—1,5$  մկկալ/սմ<sup>2</sup>·վրկ է, տատան-  
վում է  $0,6—2,4$  մկկալ/սմ<sup>2</sup>·վրկ-ի սահման-  
ներում, հազվադեպ հասնելով  $8$  մկկալ/սմ<sup>2</sup>·  
վրկ-ի: Ենթադրվում է, որ այդ ջերմության  
հիմնական աղբյուրը երկրակեղևում ռա-  
դիոակտիվ տարրերի տրոհման էներ-  
գիան է: Երկրաջերմային ուսումնասիրու-  
թյուններն ունեն տեսական և գործնական  
(խոր հանքահորերի նախագծում, Ե-յան  
տնտ. օգտագործում) կարևոր նշանակու-  
թյուն: << տարածքում երկրաջերմա-  
յին դաշտը հետազոտվում է 1960-ական  
թթ.: Կենտրոնական մասում (մոտավո-  
րապես Արագած—Գեղամա—Վարդենիսի  
լեռնազանգվածների գծով) երկրաջեր-  
մային արտահոսքը բավական բարձր է  
(միջինը՝  $2,4$  մկկալ/սմ<sup>2</sup>·վրկ) և նվազում է  
դեպի Արաքս և Բուռ գետերի հովիտները  
(մինչև  $1,2$  մկկալ/սմ<sup>2</sup>·վրկ):